

2024

## ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ

ՀՀ Արմավիրի մարզ, հ. Արմավիր, ք. Արմավիր Հ. Բաղրամյան  
փող. թիվ 39

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝  
«ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Մևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



**ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍ**

ՀՀ Արմավիրի մարզ, հ. Արմավիր, ք. Արմավիր Հ. Բաղրամյան փող. թիվ 39

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ տնօրեն՝

Դ. Կիրակոսյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2024

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ.....	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	10
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	10
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	11
1.5.3	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում.....</i>	13
1.5.4	<i>Օդափոխություն .....</i>	14
1.5.5	<i>Էլ. մատակարարում.....</i>	14
1.5.6	<i>Գազամատակարարում.....</i>	16
1.5.7	<i>Էներգախնայողության միջոցառումներ.....</i>	16
1.5.8	<i>Կանաչապատման աշխատանքներ.....</i>	16
1.5.9	<i>Կանաչ տարածքի ռոտզման ջրապահանջի հաշվարկ.....</i>	17
1.5.10	<i>Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ.....</i>	19
1.5.11	<i>Գլխավոր հատակագիծ.....</i>	21
1.5.12	<i>Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց .....</i>	23
1.5.13	<i>Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ.....</i>	24
1.5.14	<i>Կանաչապատման հատակագիծ.....</i>	25
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ .....	26
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	27
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են .....	28
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը .....	29
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	30
2.3.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....</i>	30
3.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	32
3.1	Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունները.....	32
3.2	Կլիման .....	33
3.3	Օդային ավազան.....	35
3.4	Ջրային ռեսուրսներ .....	36
3.5	Հողերի նկարագիրը .....	37
3.6	Կենսաբազմազանություն.....	38
3.6.1	Բուսական աշխարհ .....	38
3.6.1	Կենդանական աշխարհ.....	39

3.7	Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	40
3.8	Պատմամշակութային հուշարձանների ցանկ.....	41
3.9	Աղմուկ և թրթռում:.....	41
3.10	Թափոնների կառավարում .....	42
3.11	Սոցիոլոգիական գործոն .....	43
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	44
4.1	Ռիսկերի գնահատում .....	45
4.2	Արտանետումների աղբյուրները .....	45
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	46
4.3.1	<i>Մթնոլորտային օդ</i> .....	46
4.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i> .....	46
4.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i> .....	47
4.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i> .....	47
4.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i> .....	48
4.3.6	<i>Աղմուկ և թրթռում</i> .....	49
4.3.7	<i>Թափոնների կառավարում</i> .....	49
4.3.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i> .....	50
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	50
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	52
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	55
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	60
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	61

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ
Իրավաբանական հասցե`	ՀՀ Արմավիր, Վաղարշապատ, Վազգեն Առաջինի փ. 2. 41/5
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Արմավիրի մարզ, հ. Արմավիր, ք. Արմավիր Հ. Բաղրամյան փող. թիվ 39
ՇՄԱԳ հաշվետվության կազմող`	Ա/Ձ Արամ Գալոյան, հեռ. +374 99994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բնակելի թաղամաս:

Բնակելի թաղամասի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզ, հ. Արմավիր, ք. Արմավիր Հ. Բաղրամյան փող. թիվ 39 հասցեում:

Բնակելի թաղամասի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի թաղամասի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Արմավիր քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական

ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Արմավիրի մարզ, հ. Արմավիր, ք. Արմավիր Հ. Բաղրամյան փող. թիվ 39 հասցեում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2023, ՀՕ-150-Ն) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ

պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**ՀՀ ջրային օրենսգրք 2002թ.** - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք** (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին

տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

*«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.*

*«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.*

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,*

*«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը*

*«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),* որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

*ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում,* որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

*ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:*

*ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:*

*ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:*

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

ՀՀ Կառավարություն 8 փետրվարի 2018 թվականի n 108-ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

- 1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Բնակելի թաղամասի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, հ. Արմավիր, ք. Արմավիր Հ. Բաղրամյան փող. թիվ 39 հասցեում:

Հողատարածքի բնութագրերը՝

- Կադաստրային ծածկագիրը՝ 04-001-0202-0001
- Մակերեսի չափը (հա)՝ 4.645
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է բնակելի կառուցապատման գոտում, ազատ է կառուցապատումից:

Նախատեսվող բնակելի թաղամասի հարևանությամբ են գտնվում հասարակական և բնակելի կառույցներ, մասնավորապես՝

- Բնակելի տուն – 73.9մ

- Բնակելի տուն – 45.1 մ
- Բնակելի տուն – 51 մ
- Հասարակական նշանակության կառույց – 35.9 մ
- Բնակելի տուն – 46 մ

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են, սակայն, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կառուցպատողը կդադարեցնի աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնի լիազորված մարմնին:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հողատարածքի վրա տեղ-տեղ հանդիպում է թփային բուսականություն: Տարածքում ծառեր չկան:

Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 10 սմ է, տարածված է բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն:

Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 14000մ<sup>3</sup>:

Հողի բերրի շերտը կհանվի և կպահպանվի ծածկված վիճակում, շինհրապարակի տարածքում, բացառելով դրա աղտոտումը, հետագայում կօգտագործվի տարածքի բարեկարգման նպատակով:

**1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր**

ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Բաղրամյան փողոց 39 հասցեի տարածքում բնակելի թաղամասի կառուցման նախագիծը իրականացված է ըստ գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի:

Թաղամասը իրենից ներկայացնում է բնակելի համալիր բաղկացած թվով 9 մասնաշենքից: Մասնաշենքերը բաժանվում են հիմնական 3 տիպի - A, B, C:

· Մեկ միավոր A մասնաշենքի ընդհանուր մակերեսը կազմում է 16.040 քմ: Մասնաշենքը չորս մուտքանի է, պարունակում է թվով 190 բնակարան, հարկայնությունը տատանվում է 5-15 հարկ: Թաղամասում նախատեսված է թվով 4 միավոր A տիպի մասնաշենք, որից մեկին կցված է երկու հարկանի հասարակական միավոր:

· Մեկ միավոր B մասնաշենքի ընդհանուր մակերեսը կազմում է 12.965 քմ: Մասնաշենքը երեք մուտքանի է, պարունակում է թվով 151 բնակարան, հարկայնությունը տատանվում է 8-15 հարկ: Թաղամասում նախատեսված է թվով 2 միավոր B տիպի մասնաշենք:

Մեկ միավոր C մասնաշենքի ընդհանուր մակերեսը կազմում է 11.367 քմ: Մասնաշենքը երկու մուտքանի է, պարումակում է թվով 135 բնակարան, հարկայնությունը տատանվում է 12-15 հարկ: Թաղամասում նախատեսված է թվով 3 միավոր C տիպի մասնաշենք:

Թաղամասում նախատեսված են մանկական խաղահրապարակներ և մարզադաշտեր:

Նախագիծը մշակվել է ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՄՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախագծման ընթացքում հաշվի է առնված հաշմանդամների և սակավաշարժ խմբերի անխոչընդոտ շարժի կազմակերպման միջոցները, ուստի շինությունների մուտքային հանգույցներում առկա են թեքահարթակներ, իսկ շինության ներսում վերելակներ:

Նկուղային հարկերը ապահովված է օդափոխության և լուսավորության համակարգերով և անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես բնակիչների համար թաքստոց:

Շինարարության և շահագործման փուլերում մուտքերը դեպի տարածք և ելքերը կիրականացվեն Աբովյան և Բաղրամյան փողոցներից:

Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման նախագծվող օբյեկտը հանդիսանում է IV կատեգորիայի ռիսկայնության և ենթակա է պետական համալիր փորձաքննության:

**ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

- ՀՈՂԱԿՏՈՐԻ ՄԱԿԵՐԵՍ – 46450 քմ
- ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 11310 քմ (23.1%)
- ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ – 13950 քմ (30.0%)
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ - 125525 քմ
- ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 21190 քմ
- ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ - 5-15 ՀԱՐԿ
- ՄԱՍՆԱՇԵՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 9 ՀԱՏ
- ՄԱՍՆԱՇԵՆՔՆԵՐԻ ՏԻՊԵՐ - 3 ՏԻՊ
- ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 1467 ՀԱՏ
- ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ - 890 + 140 ՀԱՏ`

- ստորգետնյա հարկ -1` 46765քմ /-3.60 նիշ/
- ստորգետնյա հարկ -2` 7270քմ /-7.20 նիշ/

Նախագծման ընթացքում կառուցապատողը առաջնորդվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշմամբ:

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀՇՆ 30-01-2023 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ

ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 11.09.2017Թ. ԹԻՎ 128-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

**1.5.3 Ջրամատակարարում և ջրահեռացում**

ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Բնակելի թաղամասի ջրամատակարարումն նախատեսվում է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների /կցված Հավելվածներ բաժնում/:

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014 Սառը ջրամատակարարում և ներքին հրդեհաշիջում:

Բնակելի թաղամասի ջրամատակարարման համակարգը փակուղային, ստորին բաշխման է մղման պոմպերի միջոցով: Իրականացվել է հրդեհաշիջման ինքնաշխատ սպրինկլերային համակարգը, որը համակցված է ավտոկայանատեղիի հրդեհաշիջման համակարգի հետ, որոնք իրականացվում են հակահրդեհային պոմպերի միջոցով:

Նախատեսված է ջրի ռեզերվուար իր անձեռնամխելի հրդեհաշիջման պաշարով:

Օգտագործվող խողովակների, սարքերի և սարքավորումների աշխատանքային ճնշումը 10.0 մթն (1.0 ՄՊա) է:

Մուտքագծի վրա նախատեսվում է ջրաչափական հանգույց:

Խմելու ջրի կանգնակի վրա, կանգնակներից սնվող բոլոր ճյուղերի, ինչպես նաև գուգարանակոնքը սնուցող ջրամատակարարման խողովակի վրա նախատեսվում են փականներ:

Բնակելի թաղամասի ներքին սառը ջրամատակարարման ցանցը իրականացվում է պոլիպրոպիլենային de20-25մմ և պողպատե 76- 57 մմ տրամաչափի խողովակներով:

Կոյուղի և Ջրահեռացում

Ջրահեռացումն կոյուղու ներքին ցանցը իրականացված է de50- 200 մմ տրամաչափի կոյուղու պոլիէթիլենե խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով:

Ջրահեռացման կանգնակի վրա նախատեսված են ստուգիչներ: Կոյուղու թողարկները պոլիէթիլենե խողովակներով միացվում են կոյուղու բակային ցանցին:

**1.5.4 Օդափոխություն**

Բնակելի թաղամասի ավտոկայանատեղիում նախատեսված է մեխանիկական դրդմամբ օդի ներածում և արտածում:

Ավտոկայանատեղիում մշտական ռեժիմում աշխատում են Ն1, Ն2 և Ն3 ներածման և Ա1 արտածման համակարգերը: Իսկ հրդեհի ժամանակ ավտոմատ համակարգի միջոցով անջատվում են վերոհիշյալ համակարգերը և միանում են Օ1 ծխահեռացման և Դ1(ավտոկայանատեղիի արտաքին պատերին տեղադրված հակահրդեհային փականներ ) դիմհար (օդի կոմպեսացում) համակարգը :

Օդատարների մեջ տեղադրված ՀՀՓ (հակահրդեհային փական)-ի միջոցով կարգավորվում են օդի շարժման ուղղությունները, իսկ ՕՀՓ(ծխահեռացման փական)-ի միջոցով իրականացվում է ծխահեռացումը:

Ծխահեռացման օդատարները ընդունված են E150 բակայնությամբ: Ծխահեռացման էլեկտրամագնիսական փականները ընդունված են E150: Ծխահեռացման օդատարները պատրաստվում են d=1.5 մմ հաստությամբ սև մետաղից, էլեկտրահեռացման միջոցով միացվող և ներկվում են ջերմակայուն ներկով:

Հրդեհի ժամանակ մարդկանց անվտանգ տարահանման համար կարևոր նշանակություն ունի թարմ օդի ներածումը ճիշտ կազմակերպելը և օդի համապատասխան ճնշում ստեղծելու հնարավորությունը այնպես պետք է կատարվի, որպեսզի ծուխը չթափանցի վերելակի հորան: Այդ իրականացնելու համար նախատեսված է տեղադրել Դ3 և Դ4 օդամղիչները:

Բնակարաններում օդափոխությունը կատարվում է սանհանգույցից՝ արտածում (L=150 մ<sup>3</sup>/ժ) և խոհանոցների հովհարներից (L=200 մ<sup>3</sup>/ժ), նախատեսված է նաև բնական օդափոխություն (L=100 մ<sup>3</sup>/ժ) :

Կենտրոնախույս օդամղիչների կազմի մեջ մտնում են հետևյալ սեկցիաները՝

- գտիչներ ներածման օդի մաքրման համար
- թրթռամեկուսիչ, սարքավորումների տակ տեղադրվող
- օդամուղներ
- էլեկտրական օդատաքացուցիչներ
- օդամուղի պտուտաթվերը կարգավորող փոխակերպիչներ

**1.5.5 Էլ. մատակարարում**

Բնակելի թաղամասի էլ. սնուցման տեխնիկական պայմանները գտնվում են «ՀԷՑ» ՓԲԸ- ի հետ քննարկաման փուլում:

Բնակելի թաղամասի էլեկտրատեխնիկական մասի նախագիծը կատարված է Ճարտարապետաշինարարական գծագրերի, ինչպես նաև ինժեներական բաժինների առաջադրանքի հիման վրա:

Նախագծում մշակվել է շենքի գլխավոր բաշխիչ սարքավորման միագծանի սխեման, համաձայն որի շենքում սպառիչների և բնակարանների էլեկտրասնուցումը ապահովելու համար նախագծում նախատեսված է տեղադրել հետևյալ սարքավորումները՝

Մուտքային բաշխիչ սարքավորում՝ БРУ1А-11-10УХЛ4 -1 հատ,

Բաշխիչ կետեր ПР11-3098-21У3 -2 հատ,

ՊԱՄ պահարան АБР-80У- 1 հատ:

Տվյալ նախագծով մշակված են հետևյալ բաժինները՝

- գլխավոր մուտքաբաշխիչ պահարանները
- բաժանորդային պահարանները՝ հաշվիչներով,
- մագիստրալ գծերը ԳԲՎ-ից մինչև սպառիչներ,
- շենքի ներքին ուժային և լուսավորության ցանցերը,
- ընդհանուր տարածքների բաշխիչ և խմբային վահանները:

Բաշխիչ էլեկտրական ցանցերի տեսակները՝ հնգալար ցանց 380Վ:

### Էլեկտրամատակարարում

Շենքում բոլոր սպառիչների համար նախատեսված է հաշվիչների արկղեր: Բնակարանների հաշվիչների արկղեր տեղադրվում են յուրաքանչյուր մուտքի հորանում՝ 3-րդ, 7-րդ, 11-րդ, 15-րդ հարկերում, իսկ մյուս սպառիչների հաշվարկային սարքերը տեղադրվում են ավտոկայանտեղիում: Հաշվիչների արկղից դեպի սպառիչների բաշխիչ վահաններ մալուխները անց են կացվում ավտոկայանի առաստաղին ամրացվող մետաղական մալուխային վաքերով, հորանով և պատով:

Վահանները պետք է ունենան հետևյալ բնութագրերը՝ հնգալար համակարգ (TN-C-S հողանցման համակարգ) պատին կախովի վահաններ բաշխման մոդուլների համակարգով, IP43 կաղապարի նվազագույն պաշտպանության դասով:

Նախագծով նախատեսվում է մայրուղային և խմբային ցանցերն իրականացնել պղնձե ջիղերով և չայրվող մեկուսացմամբ մալուխներով: Բոլոր մալուխները ընտրվել են պղնձյա, չայրվող՝ ВВГнг-LS տիպի: Ծխահեռացման և օդափոխության համակարգի էլեկտրամատակարարման համար բոլոր մալուխները ընտրվել են պղնձյա, չայրվող՝ ВВГнг-FRLS տիպի:

Նախագծով նախատեսվում են սնուցման հետևյալ ցանցերը.

- լուսավորության ցանց,
- էլեկտրասարքավորումների սնման ցանց:

Լուսավորության և սարքավորումների սնման ցանցերը իրականացված են հնգալար մալուխներով, որոնց ընտրությունը կատարվել է համաձայն ԷՄՆԸՊ ՏԿ III գլխի 8 կետի №6 և №7 աղյուսակների: Լուսավորության ցանցը սնող մալուխների նվազագույն կտրվածքը նախատեսվում է 5x1.5մմ<sup>2</sup>:

Լուսավորության ցանցը սնող մալուխը մոնտաժվում է վաքով, հորանով , իսկ հարկերում լարամցումն իրականացվում է սվաղի տակ:

Լարերի խմբային միացումներն նախատեսված է իրականացնել սեղմակներով, իսկ բաժանումները բաշխիչ տուփերում:

Նախագծում էվակուացիոն լուսատուների սնուցումն իրականացվում է լուսավորության բաշխիչ վահանից սնվող վահանակից առանձին ուղղություններով;

**1.5.6 *Գազամատակարարում***

Բնակելի թաղամասի գազամատակարարումն իրականացնելու է Արմավիրի ԳԲԿ-ից Արմավիր քաղաք և Բաղրամյան շրջկենտրոն սնող մ/ճ գազատարից, համաձայն «Գազայրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

Բնակելի թաղամասում կենտրոնացված ջեռուցում չի նախատեսվում: Ջեռուցումը իրականացվելու է լոկալ:

**1.5.7 *Էներգախնայողության միջոցառումներ***

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пенopleкс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

**1.5.8 *Կանաչապատման աշխատանքներ***

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի N108 որոշման պահանջներին համապատասխան:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառազիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատունկան հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կղիմի լիազորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Ստորև ներկայացվում է ծառերի և բուսատեսակների անվանացանկը:

- Թղկի սրտատերեվ կարմիր - 117 հատ
- Գնդաձեվ իլենի - 54 հատ
- Գնդաձեվ թույա - 72 հատ
- Բարբարիս - 36 հատ
- Ասպիրակ - 48 հատ
- Ֆորզիցիա - 36 հատ
- Խենոմելիս - 81 հատ
- Սամշիտ - 1800 գծմ
- Եղեվնի կովկասյան - 40 հատ
- Թզուկ վարդեր - 1500 մ<sup>2</sup>
- Սիզամարգ – 11966 մ<sup>2</sup>

**1.5.9 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ**

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

զազոնների ոռոգում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$


որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, զազոնների մակերեսը՝  $S_1 = 13.950 \text{ մ}^2$ ,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 13950) \times 2 \times 175 = 29295 \text{ մ}^3/\text{տարի}$$

1.5.10 Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ



ՆԱԽԱԳՐԱՆՆԵՐ	
ՄԱՍԻՆ ԳՐԱՐԱՆՈՒ ԿԱՌԱՐԱՆՆԵՐ ԼՍԱԳԻԹ	
ՔԱՅԵ	
11. Առնչվող յուր, հարցով առնչվելու, և՛ Գործարարական քաղաք 33 հոլանդացի	
ՆԱԽԱԳՐԱՆՆԵՐ ԴԱՆՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՐԱՆՆԵՐ	
«ՏՈՒՆԱՆ» ՄԻԷ	
ՆԱԽԱԳՐԱՆՆԵՐ ԿԱՌԱՐԱՆՆԵՐՆԵՐ	
	
«ԻՐԱՎԱՅԱՆԱԿԱՆ ԹՈՂԱԿՆԵՐ» ՄԻԷ	
ՆԱԽԱԳՐԱՆՆԵՐ ՄԱՍԻՆԱԿԱՆՆԵՐ	
ՔԱՅԵ	ՍԱՐԿ ԵՎԱՆՈՒ ՆԱԽԱԳՐԱՆՆԵՐ
ՏԱՐԿ	Ո. ԻՍԱԿԱՆՅԱՆ
ԿՈՒՆ.	Է. ԳՈՎԻՆՆԱԿՅԱՆ
ՄԱՍԻՆ ԿԱՌԱՐՆԵՐ	
ՄԱՍԻՆ ԼՍԱԳԻԹՆԵՐ	
ՍԱՐԿ/ՍՏՈՒՄՆԵՐ	
ՍՏՈՒՄ ԿԱՌԱՐՆԵՐ	
ԿԱՌԱՐԱՆՆԵՐ ԿԱՌԱՐԱՆՆԵՐ ՎԱՍՏԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԹ	
ՄԱՍԻՆԱԿԱՆՆԵՐ	
ՍՏՈՒՄ ԿԱՌԱՐՆԵՐ	ՆԱԽԱԳՐԱՆՆԵՐ
ՍԱՐԿԱՆ ԿԱՌԱՐՆԵՐ	








Հողաչափի տվյալներ - 46.450 քմ  
 Կառուցվածքային տվյալներ - 11.310 քմ (23.1%)  
 Կառուցվածքային տվյալներ - 13.950 քմ (30.0%)  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ - 125.525 քմ  
 ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ - 21.190 քմ  
 ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ - 5-15 ՀԱՐԿ  
 ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՔԱՆԱԿ - 9 ՀԱՏ  
 ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՏԻՊԵՐ - 3 ՏԻՊ  
 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 1467 ՀԱՏ  
 ԱԿՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԵՐ - 890 + 140 ՀԱՏ

ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ	
ՊԼԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼՍԱՆՔԻԾ	
ՔԱՆՈՒՑ	
Գ. Առնաճառի մարզ, համայնք Արմավիր, Ա. Բարսեղյանի օրոք 38 հողագրով	
ՆԱԽԱԳԻՐ ԴԱՏՎՈՒՄԵՆ ԻՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅՈՒՆ	
«Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ» ՍՊԸ	
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎՈՒՄԻՆ	
ՊԵՐՈՒՄ	ՄԱՐԿԱԿԱՆՈՒՄ
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎՈՒՄԻՆ	
Ո. ՆԱԿԱՐԱԿՅԱՆ	
ՏԱՐԻ	ՍԵՆՏԱԿՆԵՐ
Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ	
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ	
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎՈՒՄԻՆ	
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ	
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՐ	
ՄԱՍՏՈՒՑ	
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ	
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ	ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ
ՆԱԽԱԳԻՐ ԱՐՄԱՎ	

1.5.12 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՄԻՍՆԵՐ											
		4	8	12	16	20	24	28	32	36	40	44	48
1	Նախապատրաստական աշխատանքներ	■											
2	Հողային աշխատանքներ	■	■										
3	Հիմնային աշխատանքներ		■	■	■								
4	Պատեր			■	■	■	■						
5	Ե/բ ծածկեր, Ե/բ կոնստրուկցիաներ					■	■	■					
6	Պատեր						■	■	■				
7	Ե/բ ծածկեր, Ե/բ կոնստրուկցիաներ							■	■	■			
8	Տանիքային աշխատանքներ								■	■	■		
9	Միջնորմներ									■	■	■	
10	Սանտեխնիկա էլեկտրոմոնտաժ										■	■	■
11	Հարդարման աշխատանքներ										■	■	■
12	Բարեկարգման աշխատանքներ										■	■	■

1.5.13 Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ





## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինարարական դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

**1.** Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

**2.** Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված **[ընդհանրացված]** տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

**3.** Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

**1.** Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ **[հատուկ արտահագուստ, կոշիկ]**, համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով **[ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն]**, սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

**2.** Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

**3.** Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ

անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

**4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:**

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

### 2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 48 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան,

պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիզոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց գերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ռոռգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

**Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են**

Բնակելի թաղամասի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև՝

Յ/Յ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԿԵԻՇԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿԸ
1	Բուլդոզեր	Ե10M.0111-1E	հատ	1
2	Թրթուրավոր էքսկավատոր շերտիի տարողությունը - 1.85 մա	Hyundai R 290 LC-7A	հատ	2
3	Թրթուրավոր էքսկավատոր շերտիի տարողությունը - 1.65 մա	Hyundai R 220 LC-9S	հատ	2
4	Թրթուրավոր էքսկավատոր - փխրեցնող	Hyundai R380 LC-9SH	հատ	1
5	Աշտարակային կռունկ -սլաքի երկարությունը - 50.0-60.0մ -կեռիկի բարձրությունը - 40.0-140մ - բեռնունակությունը -8.0-1.5տ	QTZ - 125	հատ	4
6	Ավտոկռունկ -սլաքի երկարությունը - 30.0մ -կեռիկի բարձրությունը - 22.72մ - բեռնունակությունը -16տ	KC-35714-10	հատ	2
7	Ավտոկռունկ աշտարակային կռունկների մոնտաժման և ապամոնտաժման համար -սլաքի երկարությունը - 40.0մ -կեռիկի բարձրությունը - 55.0մ - բեռնունակությունը -55.0տ	LIEBHERR LTM 1055-3.2	հատ	1
8	Ավտոհինքնաթափ -25տ	KAMA3	հատ	7
9	Ավտոբետոնախառնիչ	AԵԸ	հատ	3
10	Բետոնամուղ պոմպ	Volvo FM12	հատ	3
11	Շարժական բետոնախառնիչ		հատ	2
12	Կողավոր ավտոմեքենա		հատ	3
13	Կոմպրեստորային կայան	ՅՊՓ-55	հատ	2
14	Թրթրան մակերեսային	Ս - 414	հատ	3
15	Թրթրան խորության	ԻՎ-117	հատ	3
16	Եռակցման ապարատ	ՍՏ-2	հատ	4
17	Հատակներ հարթեցնող	ՍՕ-179, ՍՕ-155	հատ	4
18	Ձեռքի տոփանիչ	Ի-157	հատ	4
19	Հետևար մուրճ	ՍՊ-5Պ	հատ	4
20	Էլեկտրամուրճ	ԻԷ-4207	հատ	4
21	Կենտրոնախույզ պոմպ	Ս-245	հատ	2
22	Փոխադրիչ ժապավեն	ՍՍ-13		
23	Ձյութիալ սարքավորում	ՍՕ-179	հատ	1
24	Գլղոն		հատ	1
25	Ավտոմեքենա - 27 մ	Mitsubishi Fuso 27m	հատ	2

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

**2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները**

*Հողային աշխատանքներ՝*

*Հանույթ՝ 115150մ<sup>3</sup>*

*Հետլիցք՝ 34600*

Ավելցուկային 80550 իս հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

*Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 65 մարդ, որից*

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ
- Բանվորներ - 62 մարդ

**2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում**

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{է.լ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 62 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 1248 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 62 \times 0.025) \times 1248 = 1994,3 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.6 \text{ մ}^3/\text{օր:}$$

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 46500 մ<sup>2</sup>,

**K<sub>1</sub>** – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 600

**D** – օրեկան ջրցանի քանակը, 2

$$U_1 = 46500 \times 0.0015 \times 600 \times 2 = 83700 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 139,5 \text{ մ}^3/\text{օր}$$

**c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

**S<sub>2</sub>** – լվացվող ավտոմեքենաների քանակը, 15 հատ,

**K<sub>2</sub>** – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ<sup>3</sup>,

**T** – ժամանակահատվածը օրերով, 1248

$$U_2 = 15 \times 0.14 \times 1248 = 2620.8 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 2.1 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 88315,1 մ<sup>3</sup>/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն թվով 4 հատ ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: Բիոզուգարանները կսպասարկվեն մասնագիտացված կազմակերպության կողմից և կդատարկվեն ըստ անհրաժեշտության:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայամանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից, պայամանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադր:

**3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Հետագուսվող տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Բաղրամյան փողոց 39 հասցեում:

**3.1 Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունները**

Ստորև աղյուսակում բերվում է գրունտների (շերտերի) ֆիզիկամեխանիկական պարամետրերը՝ համաձայն փորված հետախուզահորերի, արխիվային նյութերի և շինարարական նորմատիվների:

Շերտի տեղանունը	Շերտի համարը	Երկրաբանական ինդեքսը	Գրունտի խտությունը, տ/մ <sup>3</sup>	Ներքին շինանակրանք		Տեսակարար շարվածություն, %		Դեֆորմացիայի մոդուլը, ՄՊա	Հաշվարկային դիմադրությունը R <sub>0</sub> , ՄՊա ՀՀՇՆ IV 10.01.01-2006	Մշակման կարգը ըստ ՇՆԿ IV-5-82	Հարթակի գործակիցը, K <sub>0</sub> կգ/տմ <sup>2</sup>	Գրունտի կարգն ըստ սեյսմիկ հատկության
				φ <sub>0</sub>	φ <sub>n</sub>	C <sub>0</sub>	C <sub>n</sub>					
Բուսահող	1	--	1.8	--	--	--	--	--	--	2	--	--
Ճալաքարակոպճային	2	I-aIQ <sub>3</sub>	2.1	34°	30°	--	--	40	0.3	4	3	2
Կավավազներ	3	IQ <sub>2-3</sub>	1.8	23°	20°	0.03	0.02	9	0.2	2	1	
Ավազներ	4	IQ <sub>2-3</sub>	2.0	32°	29°	--	--	25	0.25	2	3	

**ՀՈՐԱՏԱՆՅՔԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**Հորատանցք – 1**

Շերտ 1 0,0-0,3 Բուսահող բաց շագանակագույն, կավավազային կազմի, ճալաքարի ու կոպիճի 10-15% պարունակությամբ:

Շերտ 2 0,3-5,5 Ճալաքարակոպճային գրունտ ավազներով: Բեկորային նյութը տարակազմ, լավ հղկված, սակավ խոնավ:

Շերտ 4 5,5-20,0 Ավազներ բաց շագանակագույն ու մոխրագույն, խոշոր և միջնահատիկ, ճալաքարով և կոպիճով, սակավ խոնավ, խիտ, փխրուն, կավավազների ենթաշերտերով:

**Հորատանցք – 2**

Շերտ 1 0,0-0,3 Բուսահող բաց շագանակագույն, կավավազային կազմի, ճալաքարի ու կոպիճի 20-25% պարունակությամբ:

Շերտ 2 0,3-4,0 Ճալաքարակոպճային գրունտ ավազներով: Բեկորային նյութը տարակազմ, լավ հղկված, սակավ խոնավ:

Շերտ 3 4,0-7,2 Կավավազներ բաց շագանակագույն, պինդ կոնսիստենցիայի, ճալաքարի ու կոպիճի 10-15% պարունակությամբ, ավազների 15-20սմ հզորությամբ ենթաշերտերով:

Շերտ 4 7,2-20,0 Ավազներ բաց շագանակագույն ու մոխրագույն, խոշոր և միջնահատիկ, ճալաքարով և կոպիճով, սակավ խոնավ, խիտ, փխրուն, կավավազների ենթաշերտերով:

**Հորատանցք – 3**

Շերտ 1 0,0-0,3 Բուսահող բաց շագանակագույն, կավավազային կազմի, ճալաքարի ու կոպիճի 20-25% պարունակությամբ:

Շերտ 2 0,3-1,5 Ճալաքարակոպճային գրունտ ավազներով: Բեկորային նյութը տարակազմ, լավ հղկված, սակավ խոնավ:

Շերտ 3 1,5-2,5 Կավավազներ բաց շագանակագույն, պինդ կոնսիստենցիայի, ճալաքարի ու կոպիճի 10-15% պարունակությամբ, ավազների 15-20սմ հզորությամբ ենթաշերտերով:

Շերտ 4 2,5-20,0 Ավազներ բաց շագանակագույն ու մոխրագույն, խոշոր և միջնահատիկ, ճալաքարով և կոպիճով, սակավ խոնավ, խիտ, փխրուն, կավավազների ենթաշերտերով:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 4 տարբեր շերտերով, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են աղյուսակում:

- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի համար որպես հիմնատակ կարող են ծառայել շերտ 2-ի (ճալաքարակոպճային գրունտ) և շերտ 4-ի (ավազներ) գրունտները:
- Տեղամասում մինչև 20 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:
- Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Արմավիր քաղաքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, գրունտի սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են 0,3g:
- Գրունտների կարգն ըստ սեյսմիկ հատկությունների՝ 2-րդ է:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

### 3.2 Կլիման

Տեղամասի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել է «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը» փաստաթղթի տվյալները: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական հարաչափերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող Արմավիր օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները: Համաձայն օդերևութաբանական կայանի տվյալների ուսումնասիրվող տարածքի կլիմայական շրջանը տաք է՝ շոգ ու չոր ամառով և ցուրտ ու անհողմ ձմեռով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի անցնում 254 մմ-ից, միջին տարեկան միջին խոնավությունը 60% է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +41.5°C, իսկ նվազագույնը՝ -31.4°C: Աղ. 3.2-3.6 ամփոփված է տեղեկատվություն քամիների, օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, մթնոլորտային տեղումների ու ձյան ծածկույթի վերաբերյալ:

Աղյուսակ 2.1.

*Օդի ջերմաստիճանը՝ ըստ ամիսների*

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	870	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Արմավիր մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Աղյուսակ 2.2.

*Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների*

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Ամենացուրտ ամսվա, %	Ամենաշոգ ամսվա, %
Արմավիր	75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	75	46

Տեղումների բնութագիրը ըստ Արմավիր օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3.

*Մթնոլորտային տեղումները*

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը՝ միջին ամսական օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254	96	158
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47		

Քամու ակտիվությունը ռեզիոնում ըստ Արմավիր մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Աղյուսակ 2.4

Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, %								Անդրրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներից	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	Հս Արմ	2.8
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8						
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11						
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7						
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8						
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6						
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14						
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8						
									72	0.6					

3.3 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Արմավիր համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային

կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10-50000 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.095 մգ/մ<sup>3</sup>;
- Ծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ<sup>3</sup>:

### 3.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Սարգում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը: Դարեր շարունակ օգտագործվել է որպես Արարատյան դաշտերի հողերի ոռոգման աղբյուր: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում և սկսվում է Ակնա լճից Մեծամորն է (Սևջուրը), սնվում Այդր լճից ու նրա մերձակա աղբյուրներից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է:

Գարնանը սահմանային Արաքսի, ինչպես նաև Քասաղի հորդացած ջրերը դուրս են գալիս ավերից ու ավերածությունների պատճառ դառնում: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից 2023թ. 3-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4րդ դաս): Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

### 3.5 Հողերի նկարագիրը

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալված տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալված հողեր՝ ակալահողերը: Տեղ-տեղ երևում են թափիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի

պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 96 896.5 հա, որից վարելահողերը՝ 39764,1հա: Չմշակվող հողերը կազմում են 13 207.95 հա, որից աղակալված է 2 986 հա:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(եղևկ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Հայաստանի հանրապետությունում հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Համաձայն «Հիդրոոլեռնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան ամփոփ տեղեկագրի՝ 2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզ/ Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
<i>Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ</i>							
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

**3.6 Կենսաբազմազանություն**

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

**3.6.1 Բուսական աշխարհ**

Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանաստուրի (Eringium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundelia tournefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուլա բունգեի (Allochrysa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օջան Թամամջյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ

(*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araraticum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanelia*) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված է 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ խնկեղեզ ճահճային (*Acorus calamus* L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային (*Sternbergia colchiciflora* Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշաբաժակ (*Actinolema macrolema* Boiss), Երնջակ Վանատուրի (*Eryngium wanaturii* Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (*Amberboa iljiniana* Grossh) և այլն:

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշումների՝ Արմավիր քաղաքի տարածքում հանդիպում են հետևյալ տեսակները.

- Ծովային քարադր (*Charadrius alexandrinus* Linnaeus)-խոցելի տեսակ է: Բնադրում է Արարատի մարզում՝ Արմաշի ձկնաբուծական տնտեսության տարածքում, հավանաբար, նաև մասնատված՝ Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքի շրջակայքում:

- Օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae* Iljin)-վտանգված տեսակ է: Հայաստանում՝ հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմավիր, Վեդի, Գոռավան, Երասխ, Երևան, Զվարթնոց):

- Օշան թաղիքային (*Salsola tormentosa* (Moq.) Spach) - վտանգված տեսակ է: Հայաստանում հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմավիր, Արևշատ, Զովաշեն, Գառնի, Երասխ, Վեդի, Շահումյան):

- Սֆերոֆիզա աղուտային (*Sphaerophysa salsula* DC.) – խոցելի տեսակ է: Հանդիպում է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արմավիր, Արարատ):

Շինարարական աշխատանքների ընթացքում Կարմիր գրքային բուսատեսակներ հանդիպելու դեպքում ընկերությունը պարտավոր է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

### 3.6.1 Կենդանական աշխարհ

Կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խիտունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես ս), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կոունկ) և այլն:

Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները:

Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճոխկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքների բնորոշ տեսակներով՝ տնային ճնճուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), Մեղու Դեսպտորիա (*Megachile deseporia* Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (*Rhinolophus euryales*), վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linnaeus), փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Linnaeus), Ուբադշի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt), Հայկական բնդեռնիկ (*Glaphyrus calvaster* Zaitzev), Սև անգղ (*Aegipus monachus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային մկնաճուռակ (*Glareola nordmanni*), Սատունինի սկոտոդրիմադուսա (*Scotodryadusa satunini*) և այլն:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

### 3.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա:

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արագափ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղաղիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

**Արմավիրի մարզի բնության հուշարձանների ցանկ**

Ջրագրական հուշարձաններ		
1.	«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
Կենսաբանական հուշարձաններ		
1.	«Ավազաեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
2.	«Ջրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

**3.8 Պատմամշակութային հուշարձանների ցանկ**

Այս հոդվածը ներկայացնում է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պատմության և մշակութային հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 2 հուշարձան (2 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	հավելյալ նշումներ
Բնակատեղի «Սոխրաբլուր-Արևիկ»	մթա 3 հզմ	2,5 կմ աե	—	<a href="#">4.20/1</a>	Արմավիր-Արևիկ ճանապարհին
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1971	գ. մ.	—	<a href="#">4.20/2</a>	քանդ.՝ <a href="#">Կառլեն Լուրիջանյան</a> , ճարտ.՝ Լ. Նալբանդյան
Հուշարձան՝ Վահագնի	1971 թ.	գ. մ.	—	<a href="#">4.20/3</a>	քանդ.՝ Կառլեն Լուրիջանյան

**3.9 Աղմուկ և թրթռում:**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀԾՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն

հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

**3.10 Թափոնների կառավարում**

Արմավիր քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը,
1.	Շինարարական աղբ՝ այդ թվում քանդման աշխատանքներից	IV	9120060101004	13000մ <sup>3</sup>
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.7 տ/տարի
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	80550 մ <sup>3</sup>

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բնակելի թաղամասի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

**3.11 Սոցիոլակյան գործոն**

Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաք Երևանին, հարավ-արևելքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով՝ Թուրքիային: Արմավիրի մարզը տարածքով ամենափոքր, սակայն խիտ բնակեցված և բնակչության թվաքանակով ամենամեծ մարզն է ՀՀ-ում:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 6.3 %,
- գյուղատնտեսություն 22.0 %,
- շինարարություն 5.7 %,
- մանրածախ առևտուր 4.2 %,
- ծառայություններ 1.5 %:

Մարզի տարածքը կազմում է 1,231քառ//կմ: Արմավիրի մարզը ՀՀ-ում առանձնանում է իր գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 96,896,5հա, որից վարելահողերը՝ 39764,1հա: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկարնղեղենային և բանջարաբոստանային մշակաբույսեր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզում է գտնվում Հայկական ատոմային էլեկտրակայանը (Մեծամոր քաղաքի մոտակայքում), որը միակն է Հարավային Կովկասում և գտնվում է Երևանից 36 կմ արևմուտք և զբաղեցնում է 300 հա տարածք: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի 70կմ երկաթուղային երկաթուղին հատվածը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզում է գտնվում ՀՀ սահմանային անցման կետերից մեկը՝ «Զվարթնոց» օդանավակայանը:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով: Գործում են 58 բժշկական կազմակերպություններ: Համաձայն ՀՀ Վիճակագրության

Էլեկտրոնային կայք էջի՝ մարզի բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 266,6 հազար մարդ: Բնակչության համար կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, էթնիկ, գյուղական, ագրո և էկո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը:

Մարզկենտրոն Արմավիր քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 27.8 հազ. մարդ) գտնվում է Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Քաղաքում գործում են գինու և կոնյակի, պահածոների, կաթի և կաթնամթերքի, հացի, գազապարատուրայի, մոլիբդենի հարստացման, հաստոցաշինական, ֆուրնիտուրայի և այլ շինանյութերի, կահույքի արտադրության գործարաններ, փոքր և միջին բիզնեսով զբաղվող արտադրական և սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպություններ: Արմավիր քաղաքում գործում է խորդենու վերամշակման գործարան, որը միակն է Հայաստանում:

**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման համար, սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակություն ունեցող Բնակելի թաղամասի նախագծման ժամանակ կատարել օբյեկտի (շենքի) շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում՝ գրունտների դինամիկ բնութագրերի և հաշվարկային արագացումների որոշում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառուցումն ու շահագործումն իրականացնել համապատասխան ավարտված շինարարական օբյեկտների հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետի, Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերության, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթների) պարտադիր պահանջներին:»:

**4.1 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

**4.2 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

**4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

**4.3.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- 1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.
- 2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ.
- 3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.
- 4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.
- 5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.
- 6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.
- 7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
- 8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- 9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ:

**4.3.2 Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը կնախատեմվի շինարարական հրապարակի տարածքում: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### 4.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.11.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
  - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
  - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դաքսվում է լայնակույտերով:
  - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
  - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել **2** տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոտեղանակներով:
  - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև **20** տարի:
  - Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

### 4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

